ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը ստորև ներկայացնում է իր կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-24/03 ծածկագրով ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի փետրվարի 8-ին կնքված N ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-24/03 պայմանագրում 2024 թվականի հուլիսի 10-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը։

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում:

Փոփոխության նկարագրություն՝ ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1051-Ն որոշմամբ ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-24/03 ծածկագրով պայմանագրի կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ և պայմանագրի 7.13 կետի համաձայն 10.07.24թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 15-ի 6-րդ կետ:

Պատվիրատու՝ «ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ» ՊՄ:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

2024թ. ՓԵՏՐՎԱՐԻ 8-ԻՆ ԿՆՔՎԱԾ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԿԱԶՄՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ» Ն ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-24/03 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Վանաձոր 10 հուլիսի 2024թ.

ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմը, ի դեմս գլխավոր քարտուղար Կ. Աշրաֆյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝«Պատվիրատու», մի կողմից, և «ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խառատյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝«Կատարող», մյուս կողմից, հիմք ընդունելով 08 փետրվարի 2024թ. կնքված N ՀՀԼՄ-ԳՀԾՁԲ-24/03 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերով սահմանված դրույթները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Քանի որ ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի թիվ 1051-Ն որոշմամբ Պայմանագրի կատարման համար հատկացվել են ֆինանսական միջոցներ, համարել, որ Պայմանագիրն ուժի է մտնում սույն թվականի հուլիսի 10-ից և հաստատել վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագրում չնշված կողմերի պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, գրված է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ» ՊՄ	«ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Հայքի հրապ. 1	ք. Վանաձոր, Թումանյան 8/49-1
ՀՎՀՀ 06930769	ՀՎՀՀ 06944187
ՀՀ 900231751026	Հ/Հ 1660013164610100
ՀՀ կենտրոնական գանձապետարան	«Էվոկա բանկ» ՓԲԸ
Կ. Աշրաֆյան	Ա. Խառատյան
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված
10 հուլիսի 2024թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

/ՀՀ դրամ/

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
1	71241200	Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և կազմման ծառայություններ							7700000	7700000	7700000	7700000	7700000	7700000	7700000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ» ՊՄ
ք. Վանաձոր, Հայքի հրապ. 1
ՀՎՀՀ 06930769
ՀՀ 900231751026
ՀՀ կենտրոնական գանձապետարան

Կ. Մշուֆյան
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ՇԻՆԷՔՍՊՐՏ» ՍՊԸ
ք. Վանաձոր, Թումանյան 8/49-1
ՀՎՀՀ 06944187
Հ/Հ 1660013164610100
«Էվոկա բանկ» ՓԲԸ

Ա. Խառատյան
Կ.Տ.